մանակը այլ ինչ կարողէինք անելու, մի քիչ յառաջ գնալով՝ մի մղկիթի ստուէրում նստեցանք, և անհամբերութեամբ սպասումէինք նամակատարին, յանկարծ պատահեցին մեզ երկու ձիաւոր կղերականք, մինն էր Ղ.օշավանք գիւղի (արդէն հանգուցեալ) Սահակ քահանայն, և միսը մի անծանօթ արեղայ, որ նորա ետ բաղդաղուրկ և թշուառ Անոյն տեսութեան եկած էին՝ սոքա տեսանելով մեր դէմքում խաւարամած տրտմութիւն՝ հարցուցին պատճառը, իսկ մեք սառնարիւն կերպով բոլոր եղածները մի ըստ միոջէ պատմեցինք նրանց, որոնք այս սարսափելի բօթը լսելով՝ բարկութեամբ լցուած գիմեցին Եկեղեցին, զանահարութեամբ և քարկոծելով հեռացրին զնոսա Եկեղեցուց։

Ի վերջոյ երրորդ ժամուն մեր ընկերակիցն էլ վերադարձաւ առ մեզ մի ծրարով հանդերձ, որում՝ նոյն իսկ Հայրիկը թախանձումը Տաճկական Հաղարապետներին, որ անքուն վերահսկութիւն գործեն Անոյ Եկեղեցեաց վերայ, և որովհետև արդէն մերձ էր երեկոյեան զանգակահարութիւնը, ուստի մի ժամաչափ ևս Անոյ միս Եկեղեցիքը շրջագայելով՝ տեսանք զայն շատ և շատ ցաւալի դրութեան մէջ, որոնք քանդուքարատակ եղած էին անագորոյն Տաճիկներից։ Երկոտասան Առաքելոց հոչակաւոր Եկեղեցին, որ հինգ տարով յառաջ բաւականին շքեղ դրութիւն ունէր, (ինչպէս ականատես էի) այժմ հիմնայատակ կործանուած հետքը անգամ չէր երևում, նմանապէս և մի քանի Եկեղեցիքը։ Յետոյ յուսահատութեամբ վերադարձանք կրկին ի Ղ.օշավանք, ուրանոր Առաջնորդին մի ըստ միոջէ պատմեցինք բոլոր գլուխներիս եկած անցքերը, և խնդրեցինք, որ իւր վեհ բաղուկը հովանի անէ այդ հնութեան Եկեղեցական փոշոց վերայ. որը քաջալերեց ըզմեզ, և խոստացաւ ըստ արժանւոյն տնօրէնութիւն անել նոցա (Եկեղեցեաց) աղագաւ։

Հուսկ յետոյ անցանք Ախուրեան գետը, և եկինք ի գիւղն Ղ.ղլբիլիսայ. և գիշերը օթեցինք վերոյիշեալ Կարապետ քահանայի տանում, որը արդէն սրտերնուս սուգ և տրտմութիւնը փարատելու համար առաջարկեց ընկերացս երգասացութիւն, որոնք փոքր ի շատէ հմուտ էին երաժշտական արհեստին, որոց ձայների ներդաշնակութիւնը և քաղցր եղանակը մի քիչ սփոփեց մեր բեկոր սրտերը։ Յետ որոյ սեղան պատրաստուեց տեսակ տեսակ կանանչեղէններով և պատուական կերակուրներով, զորս ճաշակեցինք։ Ընթրիքից յետոյ յիշեալ քահանայն զուարճախօսութիւն անելով, և երբեմն մեզ հետ երգելով՝ անցուցինք այն գիշերը։ Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ մեզ համար պատրաստուած նախաճաշիկը արինք, և յիշեալ քահանայի լիաշնթունք գոհունակութիւն տալով՝ մեկուսացանք այն տեղէն, և յերեկոյեան շորրորդ ժամուն ժամանեցինք Աղէքսանդրապոլ։

Աղէքսանդրապոլից մինչև Անի գնալներս, և այն տեղէն վերադառնալներս Աղէքսանդրապոլ ուշադրութեան արժանի իրեր պատահեցին մեզ առ ճանապարհաւ եղեալ գիւղօրէից մէջ, զոր մի այլ պատեհ միջոցում յայտնելու եմ հանգամանօրէն իմ սիրելի ազգակիցներիս։

Ղուկաս Ղուկասեան

Աղէքսանդրապոլ

ԶԳՈՒՇՄՈՒՆՔ ՀԱՅԱԶՆ ՕՐԻՈՐԴԻ ՄԻՈՑ։

Լուքեարդ-Ղեան Աբարապ ամսագրոյ.

Սրանից մի քանի տարի յառաջ լսելով Քերականութեան անունը՝ կարծվում էր մի ամենադժուար արուեստ և մի բարձր գիտութիւն ուսման առարկայից մէջ։ Համարեա թէ՝ Զամբ չեանի հարուստ հեղինակած Քերականութիւնով սովորողները՝ կհանդիսացնէին իրենց իրրև մի քաջ հռետոր, տեսնողնկը կասէին թէ՝ ,,այս մարդը լաւ գիտութիւն ունի,,. որովհետև Զամբ չեան հարուստ Քերականութիւն է կարդացել կամ դաս առել, և կրնք անդամ շուռ է տուել ութ տարուայ մէջ։ Ցիրաւի որ եօթն կամ ութ տարի շարաչար կդեղերուէին, և ոչինչ չէին հասկանալ՝ ինչպէս որ կվկայեն շատերը, միմիայն անգիր անելով քանի մի չոր ու ցամաք և խրթին կանոնները, և լաւ իմանալով ուղղական բառ՝ սեռական բառի ևն. կամ գործեմ գործես ևն։

Ահա լրանում է եօթն ամիս, որ ես սովորում եմ մի նոր հեղինակութեամբ աշխատասիրած քերականութեան վերայ, նոր ղիւրին ոճով, գլխաւորապէս գործնական դասախօսութեամբ, մի ուսումնական վարժապետի մօտ, որի գեղեցիկ ըմբռնելի ձևով դասախօսութիւնը յիրաւի ուշադրութեան արժանի է։ Վերջապէս եօթն ամսոյ մէջ կհամարձակիմ ասել, բաւականին սովորելով և միանգամայն ծծելով գեղեցիկ նիւթերը քերականութեան, ուրիշ ուսանելի առարկայից հետ։ — Ահա իմ աշխատութեան նախախայծ փոքրիկ պտուղները, իմ քնքոյշ քոյրերին ցոյց տալով և մոցնելով նոցա մաքուր և մատղաշ սրտերի մէջ ուսումի ամենահարկաւորութիւնը։

Ուստի խոնարհաբար խնդրում եմ Խմբագրութենէդ պատուական Արարատ, որ իմ այս փոքրիկ յօդուածը հանդերձ առանձին և մի ոտանաւորով տեղաւորել նորա ոսկէ տողերի մէջ, շարժելու շատերի սիրտը և համակրութիւնը դէպ ի ուսումն։

Օրիորդ Հռոսկոն Տ. Ա-էրիանց.

Ի 29-ն Մայիսի 1871-ի
Ի Թաղիատան Նորի։

ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՞նչու ես տխրած, մայր իմ Հայաստան,
Ի՞նչու ես սգով, լցուած անպայման,
Որդիքդ ժողված, դէպ քեզ կդիմենք,
Ոտկէ դար, փառաց, քեզ կհասցնենք։

Թափիր քո սուգը, սրտիդ կսկիծներ,
Վերցուր սև քողդ, փարատիր խոցեր,
Թափիր քեզանից տխրութեան փոշին,
Նորոգ պճնուիր, զարդով թանկագին։

Սրբազան հողդ քաղցր է ինձ համար
Պառաւեալ մայր իմ, Հայաստան աշխարհ,
Երբեմն օտարաց կոխան է եղած,
Բայց էլի Հայոց քաղցր է անկասկած,

Երբ քո ցաւերը, աչերս տեսնում է,
Դառը արցունքով, սիրտս ողբում է,
Քեզ եմ աղաչում, երեսիդ կանգնած
Բարձիր քեզանից ամպեր սևամած։

Աչս բաց անեմ՝ Մասիսին նայեմ,
Ախ իմ կարօտս քեզանից կառնեմ,
Կարօտ սիրավառ, կարօտ մայրական,
Որ որդուոց սրտից կլղիսէ անմնան։

Արդէն ծաղկել են քո բուրաստաններ,
Մայր կժողովես քաղցր պտուղներ,
Թալկացեալ սիրտդ՝ զօրութիւն կառնէ,
Դարևոր վշտից յողջութիւն դիմէ։

Պանդխտութեան մէջ հերիք թափառես,
Աղի արցունքով սուրբ կեանքդ մաշես,
Սուրբ կաթով սնուած որդիքդ ցիրուցան,
Ընդունիր ծոցդ, քաղցրիկ Հայաստան։

Իմ սուրբ Հայաստան, քեզ շատ եմ սիրում
Ամեն բոպէում քեզ չեմ մոռանում,
Երբ որ տեղիցս ես վեր եմ կենում,
Քեզ համար յԱստուած աղօթք եմ անում։

Օրիորդ Հռոսկոն Նազարեան
Տէր Ա-էրիանց։

Թաղիատան Նորի։

ՄԵԾ ՊԱՐՆԻ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Թէպէտ իմ անզօր զրիչս չունի այնքան կարողութիւն հրատարակել Ազգային քաջագործութիւնները, բայց երախտիք բազմաջան և աղգապարծանք վաստակաւորաց ստիպում է և յատուկ պարտաւորութիւն եմ համարում ծանուցանել իմ սիրելի Ազգին, Այո՛ քաջագործութիւնն մեծ Պարնիոյ հասարակութեան որ յատուկ հիմնադիրն գոլով Փամբակ դաւառակի, յառաջինութենէ ստիպուած ցանկալի համարեցին մեկ յաւերժական յիշատակ յետ թողուլ. ի՞նչ եթէ ոչ իրենց վաղեմի հին եկեղեցին Նորոգել հասարակ շինութեամբ. մինչև ցայն միջոցը չէին տեսած ոչ կոփածոյ քարինք և ոչ յարմար որմունք, ի